ԲԱԺՆԵԳԻՆ
ԵԳԻՊՏՈՍ
Տարեկ. 50Ղ.
Վեցամ. 25 „
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկ. 13 Ֆր
Վեցամս. 7 „
Ամերիկա
2 Տոլ. 30 սենթ
ԿԱՆԽԻԿ

Թիւը 1 Ղրշ. ողջ

ՀԱՅԵԼԻ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ · ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ՊԱՏՄԱՆԵՔ
Գրութիւնք եւ չեն տրուիր
Ծանուցումներ մասնաւոր պայմաններով.

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւը 1 Ղրշ. ողջ

Է. ՏԱՐԻ — ՕՈՒԼԻՍ 16 ՀԻՆԳՇԱԲԹԻ 1903 — ԹԻՒ 264

ԱԶԳԱՅԻՆ

Ի ՆՊԱՍՏ ԶԷՅԹՈՒՆԻ

Հայաբերէն՝.—«Կը ծանուցանենք մեր ընթերցողներուն թէ, Տիգրան Երկաթի «Թուրքիան կրնա՞յ ապրիլ» հոյակապ ուսումնասիրութիւնը՝ զոր Հայաթերթ կը հրատարակէ, գրքոյկի ձեւով ալ լոյս պիտի տեսնէ. յարգելի թարգմանչին փափաքին համաձայն։ «Թուրքիան կրնա՞յ ապրիլ»ի բոլոր հասոյթը պիտի յատկացուի Զէյթունի որբերուն ու թշուառներուն. որպէս զի գոյանալիք հասոյթը՝ ամբողջութեամբը իր բարեսիրական նպատակին ծառայէ. թարգմանիչն ու Սիլիստրէի ծանօթ վաճառականներէն Տ. Անանիկ Փափազեան յանձն առած են տպագրութեան բոլոր ծախքերը հոգալ։ Տարակոյս չունինք որ ամէն հայ անհատ պիտի փութայ հատ մը գնել այս գրքոյկէն, որով թէ՛ Թուրքիոյ ազգային վրայ վաւերական արժէքաւոր ուսումնասիրութեան մը տիրացած պիտի ըլլայ, ու թէ՛ Զէյթունի ի նպաստ բարձրօրէն հայրենասիրական ու բարեսիրական ձեռնարկի մը մասնակցած պիտի գտնուի»։

—Պոլսոյ Քաղ. Ժողովը յանձնարարած է Տընտեսական խորհուրդին՝ պատրաստել ծրագիր մը կորստեան պատահականութենէ պահպանելու համար բարեգործական հաստատութեանց վերաբերեալ այն գումարներն ու արժէթուղթերն որոնք մասնաւորներու կը յանձնուին։

—Անահիտի խմբագրին դիմումին վրայ՝ Բարիզի Փասթէօրեան հաստատութեան դեր-տնօրէն Տր. Ռուին, յանձն առեր է ոչ միայն ամենապահով միջոցներով հասցնել պատուասոյր Զէյթուն, այլ և ինքն իսկ հայթայթել հարկաւոր եղած պատուասոյր Զէյթունի և շրջակայից բընակչութեան համար՝ առանց կրօնի և ցեղի խտրութեան։ Այս մարդասիրական որոշումը խորապէս յուզեր է Փարիզի Հայերը և Տ. Վռամշապուհ Քահանան և Թաղ. խորհուրդի ատենապետը նամակաւ մը Բարիզի հայ գաղութին երախտագիտութիւնը յայտներ են Տր. Ռուիին.

—Տփղիսէ լուր կուտան թէ ծաղիկ հասակին մէջ մեռեր է Տիկին Թագուհի Աւետեան որ տարի մը առաջ՝ իր ամուսնութեանն առթիւ հարսանեկան ծախքերու տեղ՝ իր անուամբը նախակրթարան մը հիմնած էր ի Պարսկաստան՝ Դաւրէժի հայաբնակ մէկ գիւղը, 3000 օսմ. ոսկի ծախքով։

ԶԵԿՈՅՑ

Արտասահմանի մեր Ազնիւ Բաժանորդներուն, Թղթակիցներուն եւ Պաշտօնակիցներուն·

Ուշադրութիւն մեր նոր հասցէին.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա 13 Յուլ. 1903

. . . Խմբագիր

Հաճեցէք ներկայիս անկիւն մը շնորհել Ձեր ազգօգուտ Հանդէսին էջերուն մէջ.

Աղջիկ մը ու մանչ մը ունիմ որոնք մեր ազգային Գողոսեան երկսեռ վարժարանը կը յաճախեն։ Երկու շաբաթէ ի վեր, երբ իրիկուններըն տուն կը վերադառնան, ո՛չ խաղ կ'երևայ աչքերնուն, ո՛չ ճաշ և ո՛չ հանգիստ. ուշ կը պառկին, առտուներն ալ կանուխ խենդի պէս կը ցատկեն իրենց անկողինէն։ Տղաքս, կ'ըսեմ իրենց, ի՞նչ է ձեր, ատ ի՞նչ փոփոխութիւն, ի՞նչ աշխատութիւն. ո՛չ հանգիստ ճաշ կընէք, ո՛չ ալ հանգիստ քուն ունիք. դաս կը կարդաք, դաս կը գրէք, գոց կընէք, կը գծէք, ևն։—Հայրիկ, կը պատասխանէ մանչս, որուն ամբողջ տարուան մէջ գիշեր մը տունը դաս պատրաստելը չէի տեսած, հա՛յրիկ, քննութիւն ունինք, չէ՞ք գիտեր. միւսիւն ըսաւ որ ալ գիշերնիդ ցորեկնիդ մէկ ընելու, աշխատելու էք որ ճերմակ երես ելլաք քննութեան մէջ ու կալ տարի կարգ փոխէք.» ըսաւ ու սկսաւ. շարունակել իր աշխատութիւնը։ Խեղճ տղաքս, կը կարծեն թէ այս երկու շաբաթներուն մէջ գիշեր ցորեկ աշխատելով սովրած պիտի ըլլան այն բանը ինչ որ արդէն չեն սովրած։ Թէ որ միւսիւն այն ատեն հոն գտնուէր, մէկդի պիտի կանչէի ու պիտի հարցնէի անոր. «Միւսիւ, ինչո՞ւ տարիին առաջին օրէն մեր տղաքը ասանկ չէիք աշխատցներ։ Միւսի՛ւ, երբ տղուս կը հարցնէի թէ դասդ չգիտնաս նէ միւսիւդ ի՞նչ կըսէ քեզի. բան մը չըսեր, կըսէր, ո՛վ միւսի՛ւ։ Ամբողջ տարին, երբ գիշերները դասերնիդ ինչո՞ւ չէք կարդար կըսէի, դասագիրք չունինք կըսէին, որովհետև դուք դասագիրք չէք ուզեր եղեր։ Ինձի պէս շատ մը ծնողքներ ալ գիտեն որ այս քննութիւն ըսուած հանդէսները շատ անգամ ի ցոյցս մարդկանց բաներ են, միւսիւ։ Քննութիւն ընելնիդ աւելորդ բան է. մենք արդէն գիտենք որ շնորհիւ ձեր անձանձիր ու անձնուէր աշխատութեան, այս տարի ալ մեր տղաքը շատ բան սովրած . . . չեն, սիրելի՛ միւսիւ։» Ու չեմ գիտեր ի՞նչ պիտի պատասխանէր միւսիւն.

Այս է, . . . խմբագիր, մեր տղոց դաստիարակութեանը համար տարուած խնամքին չափը ու եղանակը։ Ի՞նչ կընէ Հոգաբարձութիւնը. դարմանի կարօտ հոգաբարձութիւնը կը սկսի դարմանել իր սխալները քննութենէն վերջը. ըստ սովորութեան կը հրաժարեցնէ բոլոր ուսուցիչները և կը բերէ նորեր որոնք Գերմանիայում պատրաստուած են. գալ տարի ալ նոյն յուսախաբութիւնը. ուսուցիչներ կուգան, ուսուցիչներ կերթան. ո՞վ է տուժողը. ազգին սնտո՞ւկը. ան շուտով կը լեցուի նորէն։ Տուժողը մեր տղաքն են որոնց թանկագին ժամերը պարապ տեղ կը սահին կերթան ու ալ ետ չեն դառնար։ Ի՞նչ է այս վիճակին դարմանը. դարման մարման չկայ. աս՝ աս է, որովհետև ձուկը գլխէն հոտել է։

ԾՆՈՂՔ ՄԸ

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Վաղը իրիկուն (ուրբաթ) տեղւոյս Բիրամիտի թատրոնին մէջ, ի նպաստ տիկին Մարիի պիտի ներկայացուի՝. առաջին անգամ ըլլալով «Խաղացողին կենաց 30 տարին» անուն բարոյալից թատերգութիւնը. թատերգութիւն՝ որ ամենէն վարպետ խաղացողին անգամ վերջի ի վերջոյ եղերական վախճան մը ունենալը կը պատկերացնէ։

Փափաքելի է որ թատերասէր հասարակութիւնը իր արդիւնաբեր ներկայութեամբը պատուէ բազմաշխատ նպաստաւորեալը։

Թատերգութեան պիտի յաջորդէ ծիծաղաշարժ զաւեշտ մը։

ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
Սուգ-էլ-աթթարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց թէ՝ ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յատկապէս բերել տուած է Զինական, Հնդկական եւ Սեյլանի ընտիր եւ հոտաւէտ թէյեր, որոնց գործածութիւնը ներկայ տաք եղանակիս մէջ շատ օգտակար է։

Կը վաճառէ նաեւ մազի համար ընտիր ներկեր՝ ամէն գոյնէ։ Գիները չափաւոր։

ԼԵԹԱՅԻՖ

Ամ՛իտէքի մէքթուպ՝ Բիրէակէօմրիւք մէյտանընտան պուլունմուշ տըր ·

•Իքի կէօզիւմ օղլում Համ Ղարապիթ·

Սանա չօխ չօխ սէլամ իտէրիմ վէ խաթիրինի սորարըմ· Կէյինտիղին նալիլէրի, բօսթալլարը կէօրտիւղիմտէ՝ ախլըմա տիւշէյօն· Էմէէն օղլու Համ Օղօբու չըղըրթըըմ, օղլում Համ Ղարապիտէ պիր մէխթուպ եազ տէտիմ. պէք էյի տէտի · Բիրէյէ նէ՝ կօնտէրսէխ մախպուլա ղէչէր տէտիմ· Նէ՝ կօնտէրէճէէն · ապաճըղ եարմաճա, ըղըճըգ տա ճամըզ ղայմաղը խուրուսու, ըրճըխտա իզտէ իւէ իրիշկիկ կօնտէրսէն էյի օլուր ամա՝ պիզիմ իրիշկիղիմիզի մախպուլա տութմայօրլար տէտի· Իշթէ պունլարը պիր չըխը եաբտըխ՝ չէրշի Պօտոս օղլունուն տէնկինէ ղօյտուրտուխ, վարտըղընտա՝ անամ կօնտէրմիշտիր տէյիպ պէնի անղա անղա աֆիյէթ իտէսին · Պէնիմ օղլում, պէնիմ տէ սանա պիր սըխնթըմ վար · պանղա պիր պաշ չալը, չէշլիտի ղարա օլսուն, պիր քուրք խիւզիւլիւք, պիր տէ ժամ բապըճը կօնտէր տէ՝ ժամա կիտէյիմ, սէնին իչին աղլաեարագ տօվա իտէյիմ· Պէնիմ օղլում, օ Թաբաֆտան կէլէնլէր տէյօրլար քի՝ օղլուն չէօբտէն չէլէպի օլմուշ, աման տէյիմ օղլում, սէն քիմի՞ն տէօլիւսին · կէլտիղինտէ սախըն էօյլէ կէլմէյէսին, կիւլմէզ խաֆթանընը, բօսթալլարընը կէյին տէ էօյլէ կէլ · Հէմ սէնի պաշ կէօզ իտէճէէմ, օնա կէօրէ պիր չէյ կէթիր նիշանլըըղընա ·

Ծաղըր Մաննիյին օղլու Պաղտասարըն · իպիի չուլլունուն օղլու Օվանէսին · աթմաճանըն Թօրնու Ֆիրոբէնին, տամտա մէթ արխատաշըն պիլին ա՞, Գալբագճընըն կուտուգ Կօօզուն (Գէօրգ) իշթէ ալայընընտա սէլամը վար · Պիպի տէ սօբասան՝ էյիյիխ · ըրահաթըխ, սաղլըղընա տօվաճըխըխ, հասրէթլիյինէ տաեանամայօխ·

Համ Թորոս ղըզը անան
Աննա

Տիպէր գատընըն պիրի՝ կէչէն կիւն քէնտի խանէլէրինէ վիզիթայա կէլմիշ օլան զէնկին պիր անհպապա չէօյլէ տէմիշ ·

—Սիզէ պիր չէյ սէօյլէյէճէիմ Ցակոբ աղա ֆագաթ հրըլանմայաճագսընըզ ·

—Հրըլանմամ ·

—Պուգատար չօգ վարիյէթինիզ օլտուգտան սօնրա՝ նի՞չիւն տահա գազանայըմ տէրսինիզ ·

—Ա՛հ մատամ, սիզ տէ պուգատար կիւզէլ օլտուգտան սօնրա, նի՞չիւն տահա գըրմըզը սիւրիւնիւրսինիզ ·

——

Պիր հօթէլին լօգանթասընտա ·

Միւշթէրի (հիտտէթլէ) —Կա՛րսօն ·

Կարսօն —Պույուրուն, միւսիւ ·

Միւշթէրի —Նէ՞ ըէզալէթ տիր պու, սալաթանըն իչինտէն պիր թահթապիթի չըգարտըմ·

Կարսօն — Հիտտէթլէնմէյինիզ միւսիւ, պէնտէնիզ տէ՝ պու սապահ՝ սիզին գարեօլանըզտան պիր ավուճ օ մախլիւքտան թօբլատըմ ·

——

Միւսիւ տօքթօր, պիզիմ մատամըն խաստալըղը նէ՞ տիր ·

—«Եէնի չապգա սըթմասը»

——

Իքի տէլիգանլըլար·

—Միւսիւ Սրապ, եարըն սէնինլէ Իպրահիմիյէյէ կիտիպ պիր ազ էյլէնէլիմ·

—Էյի օլուր իտի ամա՝ միւսիւպէթ թէրցի՝ հալէա բանթալօնումու պիթիրմէտի քի · · ·

—Կիյմիշ օլտուղուն բանթօլօնուն նէսի՞ վար·

—Ահ պիրատէր, պէն սէնտէն պիր չէյ սագլամամ. սէօզ իչիմիզտէ՝ բանթօլօնումուն ալթը եըրթըգ տըր ·

—Ա՛ · · տէսէ՞նէ, օնուն իչիւն տիր քի տախմա գօլլարընը արգանտա պաղլը կէզէրսին ·

ՊԻԼՄԷՃԷ

Պէն պագարըմ, օ գաչար·

Իլք պուլանա միւքեաֆաթէն կիւլիւնճլիւ պիր գօմէտի տէֆթէրի վիրիլէճէք տիր ·

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Նոր–գեղցի հայ մը՝ Ամերիկա հասնելէն երկու շաբաթ ետքը հետեւեալ զուարճալի նամակը գրած է իր եղբօրը.

ՆԱՄԱԿ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԷՆ

Առ

Ազնիւ սիրեցեալ եղբայր իմ, երկու աչիցըս լոյս Հաճի Կարապետ աղա Ստեմեան ի Նոր-գեղ: Նախ և առաջ ազնիւ որպէսութիւնդ հարցանելէս զկնի կը յուսամ թէ տնով տեղով պարագայով ողջ առողջ էք և երկու երեսներդ կը պագնեմ. Եթէ զիս կը հարցնէք, հիչ մի հարցնէք. ոտքս կոտրիր աս անօրէն երկիրը չգայի. ա՛լ երկու շաբաթ է չքաշածս չմնաց.

Նիւ Եօրք ըսուած շըլլալ՞ց քաղաքը մտանք չմտանք՝ տարին մեզ ախոռ մը թափեցին. վրանիս մէկ մէկ նօմէրօլի թուղթ կախեցին ճաղին ետին նետեցին. անօրէնները մէյ մէկ փայտ բըռներ կայներ են. ետիդ դառնաս կը հրեն, առջիդ դառնաս կը մխեն. տիւշմանն ըլլայ ասոնց ձեռքը չիյնայ.

—Պապամ, կէօզիւմ, կըսեմ, մենք գող չենք աւազակ չենք, պարծենալ չըլլայ, երկիրը մալի միւլքի ալ տէր ենք, մեզ աս ծակը ինչո՞ւ խոթեցիք, եօլ թէօքէրէսի կ՚ուզէք նէ ան ալ ունինք, փախստական չենք. եախսա թող տուէք անցնիմ բանս երթամ, ես ձեր փնտռած մարդը չեմ։

Որո՞ւ կ՚ըսես, լեզու ալ չեն գիտեր որ խօսք հասկցնես. անձրեւ բռնեցանք պիտի թրջինք՝ ազատում չկայ, երեք օր երեք գիշեր հոտ ապաշխարանք քաշեցինք։

Վերջապէս վերէն ողորմութիւն եղաւ, գացին թէրճիման մը բերին. կապուտ կտակով կենճ մը.

—Դուն Հա՞յ ես, հարցուց

—Ու՜յ բերանդ պագնեմ, ըսի, Հայ եմ հապա ի՞նչ եմ.

—Անունդ ի՞նչ է,

—Անունս Նորգեղցի Մարգար է. վէլէտի Հաճի Օհանէս.

—Ուսկի՞ց կուգաս,

—Հայրենիքէն.

—Ո՞ւր կ՚երթաս,

—Թող տան նէ՝ Ամերիգա.

—Աղէկ, բայց Ամերիկայի ո՞ր քաղաքը,

—Որ քաղաքը ըլլայ թող ըլլայ. մէջն ի՞նչ ունիմ. խուրպէթ ըլլողը ալ աս տեղերը չի հարցներ. «Այսօր հոս, վաղը Այվօզ».

—Բովդ ստակ ունի՞ս.

Աս որ ըսաւ նէ խելքս տեղ ըրաւ, ասոնք զիս, հեռի լողաց, պուտալայի տեղ են դրեր՝ քովիս փարան կը հարցնեն. է՜, ինծի Նորգեղցի Մարգար կ՚ըսեն, ես իրենց փարա՞ կը ցուցընեմ.

—Փարա ո՞ւր կը պտտի, ըսի, ես փարա ունենայի նէ աս երկիրը ո՞տք կը կոխէի.

—Է հոս մարդ ունի՞ս,

Մէյ մը մտքէս ըսի քի բան չըսեմ, կ՚ելլան չօճուխը կը խաբեն ձեռքէն փառա կառնեն, վերջըն ալ ըսի ճանչւոր մը կը հանդիպի սուտերնիս մէյտան կելլայ.

Է հա՛. ըսի, Ճհեռու հեռուջազգական մը պիտի գտնուի.

—Ի՞նչ ազգական,

Հալլա, հալլա՛, ազատում չկայ,

—Է, ի՞նչ մեղքս պահեմ, էֆէնտիս, ըսի, տղայ մը ունիմ.

—Տղայ ունիս նէ ալ ի՞նչ ես կեցեր, ինչո՞ւ լուր չես տար որ գայ հանէ։

—Տղուս երեսը տեսա՞յ որ լուր տամ. անօրէնները թող չտուին որ չորս կոմս նայիմ.

Ինչ է նէ. քիչ գրոյս չատ հասկցիր թէլքաչեցինք մեր Գիրգորին, եկաւ հանեց քաւարանէն.

Տղաս Գիրգորը որ հարցընես՝ ան ալ ուրիշ տէրտ մը. քովը մարդկութիւն ըսուածը չէ մնացեր. Տեսնալուս պէս վազեցի որ վիզը փաթթըւիմ աչքերը պագնեմ, թող չտուաւ.

—Ի՞նչ կ՚ընես, ի՞նչ կ՚ընես, ըսաւ, աս երկիրը ատանկ տղայական բաներ չեն ըներ.

—Եավրում, ըսի, եօթը տարի է չեմ տեսեր, կարօտցեր եմ, թող տուր, ճիկէր է չի դիմանար. աս կէօզլիւկդ հա՛նէ՝ մէյ մը աչքերդ պագնեմ.

—Բացարձակապէս անկարելի է. տուն երթանք ինչ կուզես ըրէ, բայց աս մարդոցը մէջ չըլլար, վերջը ի՞նչ կ՚ըսեն.

—Ի՞նչ կ՚ըսեն թող ըսեն, հո՞գս. ասոնք ալ խօշ անսասուն չեն, ինսանի զաւակ են, իրենք

մէկէր իրենց զաւակները չե՞ն պագներ ։

—Հա՛, հա՛, հա՛, ատոնք անանկ բաներ չեն ըներ։

—Եօթը տարուան չտեսած զաւակնին տեսնան նէ ի՞նչ կընեն,

—Հէլօ մը կ'ըսեն մէջէն կ'ելլան.

—Ի՞նչ կ'ըսեն,

—Հէլօ.

—Հէլօն ի՞նչ է,

—Զարգացեալ գիտակից ժողովուրդին համար այդ ալ կը բաւէ.

—Օղուլ եկուր, կ'ըլլայ նէ միտքդ փոխէ, պագ մը տուր, ես տարիքս առած մարդ եմ, անանկ հէլօյով մէլօյով չեմ կշտանար։

Ես ըսի ես լսեցի։

—Ատոնք պառաւական ծըթռած գաղափարներ են, գիտակի՛ց եղիր, գիտակի՛ց, ըսաւ կեցաւ։

Ի՞նչ ըսեմ աղնիւ սիրեցեալ եղբայր իմ, ղուդ աչքերս արցունք լեցուեցաւ, լեզուս կապուեցաւ, մուխս մարեցաւ։ Զիգայի բարով չտեսնայի։

Աս տահա սկիզբն է երկանց։ Մեծ փորձանքը ետեւէն պիտի գայ եղեր։

—Ա՛ռ սա պօխչաս, տուն երթանք ըսի.

—Ես աս աղտոտ բանին ձեռք չեմ դպցներ, չըսէ՞։

—Օղուլ, ի՞նչ ընեմ, նաւուն վրայ աղտոտեցին.

—Ուէլ, այ տօնթ քէր.

Ալ կոկորդս հասաւ, չկրցայ դիմանալ,

—Ծօ՛ դուն ի՞նչ տեսակ տղայ ես, ըսի

—Պարոն, ըսաւ, պատիւ կը պահանջեմ, այդ ըսածդ կամ փաստով պիտի ապացուցանես և կամ ետ պիտի առնես, հրաժէ հրապարակ եթէ քաջութիւն ունիս։

Զար սատանայ՛, տեսնուած լսուած բան չէ որ մարդ մէջէն ելլայ, ի՞նչ կուզայ ձեռքէս որ ինչ ընեմ, բռնեցի պօխչան ես շալկեցի ճամբայ ինկանք։ Հիմա մարդու պէս քովէս ալ չի քալեր որ։

—Դուն, կըսէ Շինի քուրջ ժողվողի կը նմանիս, հեռուէն եկուր որ հետս ըլլալդ չգիտնան։

—Գնա. տղաս. գնա՛. ըսի. ես ասկէ կէմին նստածիս պէս Նորդեղ պիտի դառնամ.

—Այդ քու ոչխարամտութիւնդ միայն կը յայտնէ. շատ խօսիլ չուզեր. ետեւէս եկուր որ չըլ կորսուիս.

—Է անանկ է նէ քիչ մը կամաց քալէ որ ետեւէդ հասնիմ։

∴

Ինչ և իցէ. նորէն չերկարենք. տարաւ մեզ պէրպէրի խանութ մը. կարմիր սանտալիա մը ցուցուց. «հոս նստէ» ըսաւ։ Նստայ չնստայ մարդը ետեւէն թէքմէ մը զարկաւ սատանի տուղախը կռնակի վրայ պառկեցուց. վախէս երկու արշըն վեր թռայ

—Ի՞նչ ապուր կ'ուտէ պօռացի.

—Նստէ. վրադ կը խնդան ըսաւ Գիրգորը. ոտքերդ տնկէ նստէ. բան չկայ. պեխերդ պիտի ածելէ.

—Հէ.. իմ պեխերս. է՛ ալ երկար ըրիք. գլուխս թող կտրէ. բայց պեխերուս ձեռք զարնել չեմ տար.

—Ի՞նչ յամառ մարդ ես.

—Ամառ ձմեռ տարբերութիւն չըներ. ես 40 տարուան պեխերս չեմ ածիլեր. հասկցա՞ր.

—Գիտակի՛ց եղիր. գիտակից.

—Գտակի խօսքը ընող չկայ. մազերս պիտի կտրէ նէ. ֆէսս հանեմ. չէ նէ աս պեխերուն ձեռք չպիտի դպցընէ։

Նէ խէ թրաշ մը եղանք. դաշինք խաթ մը թաշէ լաթ առինք. գլուխս անցուցին սև պտուկ մը. վիզս ճերմակ չէմպէր մը. ոտքս հագցուցին դեղին փօթին մը որ ամեն առըմիս ճռ՛չչ կընէ կը կենայ։

—Է օ՛ղուլ. ըսի. հայտէ տուն երթանք սիկառա մը խմեմ. էօ՜ֆ հոգիս ելաւ.

—Մեր տունը հոս չէ. Պօսթոն է. ըսաւ.

—Ճանըմ ո՞ւր կըլլայ թող ըլլայ. Պօսթանն է նէ Պօսթանը երթանք.

—Դուն տգիտութեան խաւարին մէջ կը խարխափես. աս հնոտիներդ էքսփրէսին տուր երթանք Հայոց ճաշարանը հաց մը ուտենք.

—Քըսփըրսն ո՞վ է.

—Քըսփս չէ. էքսբրէ՛ս. էքսբրէ՛ս.

—Ինչ կուզէ ըլլայ անօրէնին անունը. ես իմ լաթերս մարդու չեմ տար. նօբղնօր. հալպէն եկած. հարիւր քանըհինգ ու կէս ղրուշ փարա եմ տուեր. Քափսին ինչո՞ւ պիտի տամ։

—Պարոն. դուն խօսք չես հասկնար. իմ ըսածս այն է որ աս բեռդ ամբողջովին էքսբրէսին յանձնես որ մեր տունը տանի. մենք ալ երթանք ճաշարան ճաշենք.

—Ըսել է որ աս ըսածդ համալ է. է մարդ Աստուծոյ սկիզբէն թող ըսէիր։

Տարինք պօխճան խանութ մը ձգեցինք, վրան ալ փարա տուինք։

—Եավրում Գրիգոր ըսի, ասա գործին իմ խելքս չպառկեցաւ. ատ մարդը համալլըխը առաւ, ինչո՞ւ չիգար հետերնիս.

—Ան կը բերեն.

—Օղուլ, կը բերեն ըսելով չըլլար, պիտի բերէ նէ ինչո՞ւ չի շալկեր առջիս իյնար. առնէ իր տունը տանի նէ ի՞նչ պիտի ընես. ատոր մէջը քեզի բէնիր չէքէրի ու չոր թութեմ բերեր.

—Գիտակի՛ց եղիր, գիտակի՛ց.

—Հոս նայէ ըսի, անգամ մըն ալ գտակիս բան ըսես նէ՝ ես ալ գանկէդ պիտի սկսիմ, հասկըցա՞ր.

—Ի՞նչ ընեմ. սիրելի ազնիւ եղբայրս. աս ըսած ատենս սրտէս արուն կերթար. մենք ինչ յոյսով եկանք, ի՞նչ փորձանքի հանդիպեցանք. Եօթը տարի էր զաւակս չէի տեսած. մտքէս կըսէի. երթամ հոն. տղաս երկու օրուան ճամբայ գիմաւորել գայ. ձեռքս պագնէ. ես ալ ճակատն ու աչքերը համբուրեմ. առօք փառօք անուշ անուշ խօսելով ելլանք տուն երթանք. ան ինծի ըսէ. ամա՛ն հայրս. քեզ որչա՛փ կարօտցած եմ.» ես ալ անոր ըսեմ. «Զաւակի սէրը որ այսչափ կըլլայ, հապա հօր սէրը՞...» Ես աս մտքով ելայ եկայ, նայէ ի՞նչ եկաւ գլխուս. Ան իմ պէխերուս ու գտակիս խիշմիշ կըլլայ, ես ալ անոր գանկին... Վա՛յ մեղացս. վա՛յ վա՛յ վա՛յ.

Կոչնակ Գ.

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Գրաշիլիա

Մանկապարտեզի ուսանողաց ֆենուրեան օրը՝ վարժուհին՝ Հոգաբարձութեան կողմէ առնուած շաքարը մէյմէկ փիչ բաժնեց պզտիկներուն, իսկ մնացեալը՝ մասնաւոր թաթարով իր տունը ղրկեց՝ պահելու համար... պոզազ-իչին.

ՀԱՆԵԼՈՒԿ (Թիւ 1)

Որո՞նք են այն երկու բաները,
Որ գէշկը հոտին երկու օրեաքը.

Առաջին լուծողին պարգևն է՝ նոր հրատարակուած ֆրանսերէն պատկերազարդ բօմանը.

ՏՊԱՐԱՆ ՀԱՅԵԼԻ

«Հայելի»ի տպարանին մէջ դիւրամատչելիգնով կը տպագրուին առեւտրական տուներու համար ամեն ցեղուէ՝ Բարիզեան վերջին դրութեամբ հեռաֆրրաշարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոքրիկ ազդարարութիւններ. կը տպագրուին նաեւ այցեմտոս, հասցէտոմս, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, նամակագլուխ, պայարան, տոմսակ. եւն.

Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւնք արիւրով կը կատարուին.

ԱԶԴ

Հետեւեալ գիրքերը կը ծախուին Տիար Բարսեղ Թէլլալեանի քով.

Կոստանդնուպոլսոյ Հնդիկները, վէպ	5 դրշ. ողջ
Փիլիկ Աղբար Հարսնիքը	1,5 » »
Այինեի Լէթայիմ, հայատառ եւ բրաբառ զուարճալիքներ	4 » »
Դպրանոց Գօնա, գօմէտի	20 փրյ.
Մահմուպիյէթին Միրեաճաթը	20 »

ՁՈՒԼԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ՌԱՖԱԷԼԵԱՆ

Թիւ 5 Շարա Ապտիւլ-ազիզ, Գահիրէ

Կը ձուլէ ամեն ցեղուէ տպագրական տառեր, ծաղիկ, անքերդիկ եւ կառանիթիր.

Առաջին օրէն իրեն նշանաբան ընտրած է ուղղութիւն եւ արագութիւն. Իրեն դիմողները միշտ գոհ մնացած են.

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական ամեն տեսակ գործերու կապուանիս, փորագրիչ, թէ տուսիի եւ թէ պղինձի վրայ, կը պատրաստուին նաեւ վանառականական կնիքներ՝ մեծադէ եւ քաւչուէ.

Աղեքսանդրիա, Ֆրանք փողոց թիւ 22